შეფასებისა და გამოცდების
ეროვნული ცენტრი

Դեկտեմբեր, 2025

# Թեստ աշխարհագրությունից

## Հրահանգ

Ձեր առջև  թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր  ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, ճիշտ ընկալեք  յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և նոր միայն սկսեք աշխատանքը:

Թեստի վրա աշխատելիս կիրառեք կցված քարտեզները:

<u>Նկատի ունեցեք, որ եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ նշեք նաև սխալ պատասխանը, ապա միավոր չեք վաստակի:</u>

**Թեստի առավելագույն միավորն է՝  55**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ**

**Մաղթում ենք հաջողություն:**

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք գործածել ստեղնաշարի  կոճակները:



- *Հարց ընտրովի պատասխաններով*

**Հրահանգ**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա, հետևյալ կերպ՝ պատասխանի համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

- *Բաց առաջադրանք*

**Հրահանգ**

Ուշադիր ծանոթացեք տրված տեղեկատվությանը (տեքստ, լուսանկար, աղյուսակ, գրաֆիկ, դիագրամ, ֆիզիկական, ուրվագծային, տեղագրական քարտեզներ և այլն) և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է՝ ըստ կոնկրետ առաջադրանքի:

(1) 1. Ի՞նչ է պատկերված նկարում:




ա) Գոլորշիացման էֆեկտ,

բ) ածխածնի շրջանառություն,

գ) ջրի շրջանառություն,

դ) ջերմոցային էֆեկտ:

(1) 2. Աֆրիկյայի մայրցամաքի ո՞ր փոփոխություններ են պատկերված ներկայացված նկարներում:




ա) Կլիմայական գոտիների,

բ) տեկտոնական սալիկների,

գ) բնական զոնաների,

դ) ռելիեֆի ձևերի:

(1) 3. Ներկայացված քարտեզի վրա ո՞ր ինդեքսի համաձայն են խմբավորված եվրոպական երկրները (լավագույն ցուցանիշն է՝ 10):




Քարտեզը հիմնված է 2024 թվականի տվյալների վրա

ա) Բեռնաշրջանառության,

բ) Զինիի,

գ) գլոբալացման,

դ) լիբերալ ժողովրդավարության:

(1) 4. Ի՞նչ գույնով (թվանշավով) են նշված Նիդեռլանդների գաղութները քարտեզի վրա:




Գաղութային կայսրությունները 1800 թվականին

ա) Կանաչ (3),

բ) կապույտ (2),

գ) կարմիր (1),

դ) նարնջագույն (5):

(1) 5. Վրաստանի ո՞ր տվյալների դինամիկան է արտացոլում ներկայացված գրաֆիկը:




ա) Սպառողական զամբյուղում ծառայությունների, ժամանցի և պարենային ապրանքների մասնաբաժինը,

բ) աղքատության միջազգայնորեն սահմանված շեմից ցածր գտնվող բնակչության մասնաբաժինը,

գ) արտաքին ներդրումների մասնաբաժինն՝ ըստ տնտեսական ոլորտների,

դ) առավելագույն, միջին և նվազագույն աշխատավարձերի մասնաբաժինը զբաղված բնակչության շրջանում:

(1) 6. Ո՞ր լուսանկարը *չի արվել* Վաշլովանիի պահպանվող տարածքների սահմաններում:


ა)


ბ)


გ)


დ)

(1) 7. Ո՞ր սառցադաշտը ***չի գտնվում*** Էնգուրի գետի ավազանում:



ա) Ճալաաթին,

բ) Ադիշին,

գ) Բուբան,

դ) Լեխզիրին:

**(1) 8. Ինչպե՞ս է կոչվում լուսանկարում պատկերված ջրառատ լանդշաֆտը:**



ա) Պամպա,
բ) բեդլենդ,
գ) մարշերի,
դ) մեանդր:

(1) 9.  Ո՞ր պետության անկախության օրն է հուլիսի 4-ը:



ա) Չինաստանի,

բ) Իսրայելի,

գ) Գերմանիայի,

դ) ԱՄՆ-ի:

(1) 10. Մագնիսական կողմնացույցի վերաբերյալ ո՞ր տեղեկատվությունն է ***սխալ***:




ա) Այս սարքն օգտագործվում է տեղում կողմնորոշվելու համար,

բ) եվրոպացիների շրջանում այն առաջին անգամ օգտագործվել է արգոնավորդների կողմից,

գ) աշխարհագրական բևեռի ուղղությունը որոշելու համար դրա ցուցմունքի մեջ անհրաժեշտ է կատարել ուղղում,

դ) մագնիսական անոմալիաների տարածքներում, օրինակ՝ Ասեղի հրվանդանի շրջակայքում, այն սխալ է ցույց տալիս:

(1) 11. Ո՞ր դիագրամն է համապատասխանում այն վայրին, որտեղ գերակշռում են հարավարևելյան քամիները (թվերով նշված է քամոտ օրերի քանակը):



(1) 12. Սև ծովի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

ա) Ծովի ոչ մի հատվածը երբեք չի սառչում,
բ) ամեն տարի սառչում է ծովի հարավային մասը,
գ) ամեն տարի սառչում է ծովի արևելյան մասը,
դ) երբեմն սառչում է ծովի հյուսիսարևմտյան մասը:

**(1) 13. Ի՞նչ իզոգծեր են նշված ներկայացված քարտեզի վրա։**




ա) Իզոբաթ,
բ) իզոբար,
գ) իզոթերմ,
դ) իզոհիետ։

(1) 14. Ի՞նչ են չափում նկարում պատկերված սարքով:



ա) Օդի հարաբերական խոնավությունը,

բ) երկրակեղևի տատանումները,

գ) օվկիանոսի մակարդակի փոփոխությունը,

դ) մթնոլորտային ճնշման տատանումները:

(1) 15. Ո՞ր երկրում են արված լուսանկարները:









ա) Ավստրիայում,
բ) Շվեյցարիայում,
գ) Նորվեգիայում,
դ) Իտալիայում:

(1) 16. Ո՞ր թվանշանով նշված տեղանքին է համապատասխանում տրված կլիմայական դիագրամը:







ა) 1

ბ) 2

გ) 3

დ) 4

(1) 17. Ստորև թվարկված պատասխաններից որտե՞ղ են երկրաժամանակագրական հաջորդականությամբ (հնագույնից մինչև ամենաերիտասարդը) դասավորված երկրաբանական շերտերը:




ა) D-E-C-B-A
ბ) E-D-C-B-A
გ) D-C-E-B-A
დ) D-C-B-E-A

(1) 18. Ո՞ր երկրի տվյալներն է արտացոլում ժողովրդագրական բուրգը:




ա) Շրի Լանկայի,

բ) Միացյալ Թագավորության,

գ) Սաուդյան Արաբիայի,

դ) Նիգերիայի:

(1) 19. Ըստ էկոնոմիկայի ոլորտներում զբաղվածների բաշխման Կլարկ-Ֆիշերի մոդելի՝ ո՞ր թվանշանով նշված գրաֆիկն է համապատասխանում գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների մասնաբաժնին:




ա) 1
բ) 2
գ) 3
դ) 4

(1) 20. Ի՞նչ է պատկերված արբանյակային լուսանկարում:




ա)Հյուսիսային կիսագնդում ձևավորված ցիկլոն,
բ) հյուսիսային կիսագնդում ձևավորված հակացիկլոն,
գ) հարավային կիսագնդում ձևավորված ցիկլոն,
դ) հարավային կիսագնդում ձևավորված հակացիկլոն:

(1) 21. Առաջադրանքում ներկայացված քարտեզի վրա պատկերված է բնակչության շրջանում ջրի պահանջարկի և մատչելիության կանխատեսվող հավանական պակասը 2050 թվականին: Թվարկվածներից ո՞ր երկրում է ջրի պակաս ունենալու ***ամենացածր*** հավանականությունը:




ա) Հնդկաստանում,
բ) ԱՄՆ-ում,
գ) Իտալիայում,
դ) Նոր Զելանդիայում:

(1) 22. Ի՞նչ է պատկերված առաջադրանքում ներկայացված քարտեզի վրա:




ա) Մամուլի ազատության աստիճանը,

բ) անգլերեն լեզվի իմացության մակարդակը,

գ) ժողովրդավարության որակը,

դ) գենդերային հավասարության աստիճանը:

(1) 23. Ստորև թվարկածներից ո՞ր երկրում է առկա ժողովրդագրական ծերացման ամենաիրատապ խնդիրը:




Քարտեզի վրա երկրները ներկայացված են ըստ մեդիանային տարիքի

ա) Նիգերիայում,

բ) Ավստրալիայում,

գ) Ինդոնեզիայում,

դ) Ճապոնիայում:

(1) 24. Քարտեզի հիման վրա որոշեք, թե որ պնդումն է ճիշտ:

**Ֆերտիլային տարիքի կանանցից ծնված երեխաների թիվը (2021 թ.)**




ա) 2021 թվականին ծնելիության ամենաբարձր մակարդակով առանձնանում է Արաբական Աֆրիկան,

բ) 2021 թվականին Վրաստանի և աշխարհի ֆերտիլության գործակիցը գտնվում է նույն դիապազոնի վրա,

գ) 2021 թվականին Կենտրոնական Ասիայի երկրների շարքում ծնելիության ամենացածր մակարդակն ունի Ղազախստանը,

դ) 2021 թվականին Կանադայի և աշխարհի ֆերտիլության ցուցանիշը գտնվում է նույն դիապազոնի վրա:

**(1) 25. Ո՞ր երկրում է ստեղծվել իսլամական ծայրահեղական «Բոկո Հարամ» խմբավորումը, որը 2014 թվականին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ներառել է ահաբեկչական կազմակերպությունների ցանկում:**

ա) Իսրայելում,
բ) Պակիստանում,
գ) Նիգերիայում,
դ) Աֆղանստանում:

(1) 26. Ինչի՞ հիման վրա են խմբավորված երկրները առաջադրանքում ներկայացված քարտեզի վրա:




ա) Բանկային վարկեր ունեցող բնակչության մասնաբաժնի,
բ) բնակչության շրջանում գործազրկության մակարդակի,
գ) կանանց նկատմամբ ընտանեկան բռնության,
դ) բնակչության շրջանում կրոնականության աստիճանի:

(1) 27. Ի՞նչ սկզբունքով են համարակալված քաղաքները տրված քարտեզի վրա:




ա) Ըստ տարածքի մակերեսի մեծության,

բ) ըստ կյանքի որակի,

գ) ըստ հանցավորության մակարդակի,

դ) ըստ բնակչության թվաքանակի չափի:

**(1) 28. Ո՞ր կետն է գտնվում հիպսոմետրիկորեն *<u>ավելի ցածր</u>*։**




ა) A

ბ) B

გ) C

დ) D

(1) 29. Թվարկածներից ո՞ր գետի անկումն է ամենամեծը:




ա) Ճալա գետի (მდ. ჭალა),
բ) Խևի գետի (მდ. ხევი),
գ) Բարուլա գետի (მდ. ბარულა),
դ) Մարեթի գետի (მდ. მარეთი):

(1) 30. Մոտավորապես ի՞նչ ազիմուտով է գտնվում Բարուլա գետի (მდ. ბარულა) ակունքը C կետից:




ა) 40⁰
ბ) 70⁰
გ) 95⁰
დ) 110⁰

(1) 31. Քարտեզի ո՞ր հատվածին է համապատասխանում տրված պրոֆիլը:







ა) AB

ბ) CD

გ) EF

დ) GH

(2) 32. Անվանե՛ք տեղագրական քարտեզի վրա նշված բոլոր այն կետերը (A, B, C, D, E), որտեղից ***հնարավոր չէ*** տեսնել Ճկուդի գետի (მდ. ჭკუდზე) վրա գտնվող կամուրջը: Բացատրե՛ք ձեր պատասխանը:




Անցում առաջադրանքի՝ II էջին

## რელიეფი

ძირითადი ჰორიზონტალები გავლებულია ყოველ 10 მეტრში




ა) ძირითადი ჰორიზონტალები
ბ) ძირითადი გამსხვილებული ჰორიზონტალები
გ) დამატებითი ჰორიზონტალები (ნახევრადჰორი-ზონტალები)
დ) ჰორიზონტალების სიმაღლის ნიშნულები მ-ში
ე) კალთის დახრის მაჩვენებლები (ბერგშტრიხები)

სიმაღლის ნიშნულები ა) ძირითადი ბ) ჩვეულებრივი

სიმაღლის ნიშნულები ორიენტირებით




ფლატე (ბექი) (16-ხრამის სიღრმე მ-ში)

ხრამები და ღარტაფები

## მცენარეული საფარი და გრუნტი




წიწვოვანი ტყე

ფართოფოთლოვანი ტყე

შერეული ტყე

ხემცენარეების მახასიათებლები მ-ში: 20-საშუალო სიმაღლე, 0.20-მერქნის საშულო სისქე, 6-ხეებს შორის საშუალო მანძილი




ქვიშნარი

გაუვალი და ძნელადგასავლელი ჭაობები (0.7-ჭაობის სიღრმე მ-ში)

ადვილადგასავლელი ჭაობები

## საგზაო ქსელი



გზატკეცილი

გაუმჯობესებული გრუნტის გზები გასწვრივი მცენარეული ნარგავებით

გრუნტის გზები

მინდვრის და ტყის გზები

## დასახლებული პუნქტები



საცხოვრებელი და სხვა ტიპის ნაგებობები

გამორჩეულად ცეცხლგამძლე ნაგებობები

ცალკე მდგომი კარმიდამოები

ეკლესიები

Անցում առաջադրանքի՝ I էջին

(1) 33. Բացատրե՛ք, թե ո՞ր հարցն ուսումնասիրելիս է բոլորից հարմար օգտագործել տրված ուսումնական ռեսուրսը:



(1) 34. Գյուղատնտեսական ո՞ր մշակաբույսի արտադրությունն է պատկերված քարտեզի վրա: Այդ մշակաբույսի ծագման վայրն է Լատինական Ամերիկան: Այսօր այն լայնորեն ներկայացվում է արագ սննդի ռեստորանների ճաշացանկերում:




Data source: Food and Agriculture Organization of the United Nations (2025)

(2) 35. Քարտեզի վրա պատկերված է հակաբեղմնավորիչների օգտագործման մասնաբաժինը 16-50 տարիքային խմբում: Տոկոսային ցածր ցուցանիշով առանձնանում են Կենտրոնական (Հասարակածային) Աֆրիկայի տարածաշրջանի երկրները: Բերե՛ք երկու փաստարկ, որոնք պայմանավորում են նշված հանգամանքը:



(2) 36. Անվանե՛ք այն կլիմայական գոտին, որտեղ հիմնականում ձևավորվում է տայգայի տիպի բնական զոնան և որոշե՛ք այն աշխարհագրական գործոնը, որի պատճառով այդ բնական զոնայում զարգանում են ջրաճահճային էկոհամակարգեր:



(4) 37. Վերլուծե՛ք Դեյվիդ Լիվինգսթոնի ճանապարհորդությունների քարտեզը և պատասխանե՛ք հարցերին.





ք.Ուջիջի (Տանզանիա)

Անցում առաջադրանքի՝ II էջին

**(1) 37.1.** Ո՞ր ճանապարհորդ-լրագրողն է 1871 թվականին մեկնել Աֆրիկա՝ փնտրելու Դեյվիդ Լիվինգսթոնին (նրանց հանդիպումը պատկերված է նկարում):

ա) Ալեքսանդր Հումբոլտը,
բ) Հենրի Մորտոն Ստենլին,
գ) Նիկոլայ Միկլուխո-Մակլայը,
դ) Ֆրիտյոֆ Նանսենը:

**(1) 37.2.** Որտե՞ղ է տեղի ունեցել ճանապարհորդ-լրագրողի հանդիպումը Դեյվիդ Լիվինգսթոնի հետ:

ա) Զամբեզի գետի ակունքի մոտ,
բ) Կալահարի անապատում,
գ) Տանգանիկա լճի ափերի մոտ,
դ) Վիկտորիա ջրվեժի մոտ:

**(2) 37.3.** Անվանե՛ք Դեյվիդ Լիվինգսթոնի հայտնաբերած աշխարհագրական օբյեկտները, որոնց աշխարհագրական կոորդինատներն են՝ Հվ.լ. 17°55' և Արլ.երկ. 25°51' (պատասխանների թերթիկի վրա այս աշխարհագրական օբյեկտը նշեք առաջինը), Հվ.լ. 11°05' և Արլ.երկ. 29°45' (պատասխանների թերթիկի վրա այս աշխարհագրական օբյեկտը նշեք երկրորդը):

Անցում առաջադրանքի՝ I էջին

**(4) 38. Վերլուծե՛ք XVIII դարի անգլիացի հոգևորականի, ժողովրդագրի և տնտեսագետի տեսության հիման վրա ստեղծված պարզեցված գրաֆիկը և պատասխանե՛ք հարցերին.**




**(2) 38.1.** Նշե՛ք՝ ո՞ր գիտնականի մասին է խոսքն առաջադրանքում և ի՞նչ եզրակացության է նա հանգել իր տեսության հիման վրա:

**(2) 38.2.** Ի՞նչ լուծում է առաջարկում գիտնականը բացահայտված գլոբալ խնդիրը լուծելու համար և ի՞նչ լուծում է գտնվել նշված խնդիրը լուծելու համար ժամանակակից աշխարհում:

(8) 39. Ժամանակակից աշխարհի հիմնական մարտահրավերներից է էներգետիկ ռեսուրսներով ապահովումը: Էներգետիկ ռեսուրսների շուկայում գների և մատակարարումների տեսանկյունից անկայուն իրավիճակ է ձևավորվել: Ստորև տրված է տեղեկատվություն, համաձայն որի կարող ենք գնահատել 2022 և 2023 թվականներին Եվրամիության բնական գազի շուկայում ստեղծված իրավիճակը: Վերլուծե՛ք տեղեկատվությունը և պատասխանե՛ք հարցերին:

Դեպի Եվրամիություն բնական գազի փոխադրման այլընտրանքային ուղիներ (2023 թվական)




* Նորվեգիայի տվյալները 2022 թվականին ներառված էին այլ երկրների տվյալների մեջ

Անցում առաջադրանքի՝ II էջին III էջին







(1) 39.1. Համաձայն A դիագրամի՝ քանի՞ տոկոս էր կազմում Ալժիրից ԵՄ երկրներ բնական գազի արտահանումը 2022 թվականին:

ა) 6%
ბ) 9%
გ) 13%
დ) 20%

Անցում առաջադրանքի՝ I էջին III էջին

**(2) 39.2.** Համաձայն C դիագրամի՝ ի՞նչ միտում է նկատվում դեպի Եվրամիություն բնական գազի խողովակաշարերով և տանկերներով մատակարարման հետ կապված: Նշե՛ք այդ փոփոխության հիմնական պատճառը:

**(1) 39.3.** Բացատրե՛ք, թե ինչու է Ռուսաստանից ներմուծվող բնական գազի մասնաբաժինն ավելի շատ կրճատվել A դիագրամում, քան B դիագրամում:

**(1) 39.4.** Անվանե՛ք այն պետություններից մեկը, որը 2022 թվականին ամբողջովին կախված էր Ռուսաստանից բնական գազի ներմուծումից:

**(1) 39.5.** Բացատրե՛ք, թե ԵՄ բնական գազի շուկայում որ երկիրն ուներ ամենամեծ մասնաբաժինը 2022 թվականին:

**(2) 39.6.** Հաշվե՛ք, թե օրական քանի միլիարդ խորանարդ ֆուտ բնական գազ էր սպառում Եվրամիությունը 2022 թվականին (անպայման ցույց տվեք հաշվարկման գործընթացը) և որոշե՛ք, թե որ երկիրն է առաջատարը հեղուկացված բնական գազի մատակարարման առումով:

Անցում առաջադրանքի՝ I էջին II էջին